Կարծիք

Անի Սպարտակի Նազարյանի «Սոցիալական կարծրատիպերի և անձնային աճի համահարաբերակցությունը» ԺԹ.00.03 – «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ատենախոսության վերաբերյալ

Սույն ատենախոսության մեջ արծարծված հիմնախնդրի, այն՝ է՝ սոցիալական կարծրատիպերի և անձնային աճի համահարաբերակցության ուսումնասիրությունը բնորոշվում է արդիականությամբ, մասնավորապես այն առումով, որ սոցիալական կարծրատիպերը, լինելով բարդ ու լայնածավալ կիրառելիություն ունեցող հոգեբանական համակարգեր, անմիջականորեն ազդեցություն են գործում անձի և սոցիալական խմբերի լիարժեք ինքնիրացման, ստեղծագործական ունակությունների դրսևորման, կրեատիվության արտահայտման, անձնային ներուժի գնահատման, արժևորման և լիարժեքորեն կիրարկման վրա: Ուստի՝ իրականացված այս հետազոտության արդյունքների վերլուծությունը հնարավորություն կտա անձի կողմից վերանայել իր կարծրատիպային պատկերացումները, հրաժարվել ռիգիդ համոզմունքներից, վարքային դրսևորումներից, ինչը հնարավորություն կընձեռի առավել լիարժեք իրականացնել սոցիալ-հոգեբանական հարմարման գործընթացը հարափոփոխ այս աշխարհում:

Ատենախոսության հեղինակը, հիմնվելով հոգեբանական գիտական գրականության մեջ սոցիալական կարծրատիպերի վերաբերյալ գոյություն ունեցող բազմաթիվ բնորոշումների և մոտեցումների վրա, սույն ատենախոսության շրջանակներում, ներկայացրել է իր բնութագրերը՝ ինչպես սոցիալական կարծրատիպերի, այնպես էլ անձնային աճի, վերջինիս բնութագրիչների վերաբերյալ՝ իբրև անձի կողմից իր անձնային ներուժի և սոցիալապես նշանակալի անձնային հատկանիշների գիտակցման, ճանաչման և կատարելագործման գործընթաց, որը տեղի է ունենում որոշակի արտաքին և ներքին գործոնների ներգործությամբ և ապահովում է անձի լիարժեք կենսագործունեությունն ու ինքնիրացումը՝ բարձր ստեղծագործականության, ստեղծարարության, կոնգրուենտության, ինքնաճանաչման և ինքնազարգացման ձգտման, արժեքային կողմնորոշումների հստակ գիտակցման, սիրո և սեփական անձի և այլոց հանդեպ հարգանքի, զգացմունքների, մտքերի անկեղծության, ինքնավստահության, ինքնուրույնության և այլ բնութագրիչներով:

Սույն հետազոտության կիզակետը սոցիալական կարծրատիպերի և անձնային աճի միջև առկա փոխկապակցվածության դիտանկյունն ու անձնային աճի դրսևորման մակարդակի և

անձի սոցիալական կարծրատիպերի արտահայտվածության միջև գոյություն ունեցող հակադարձ համահարաբերակցական կապի բացահայտումն է:

Առավել հետաքրքրական է ատենախոսի դիտանկյունը առաջադրված հիմնախնդրին՝ կապված սոցիալական կարծրատիպերի և անձնային աճի փոխկապակցվածության ու համահարաբերակցության վերհանման ու լուսաբանման հետ: Փաստն այն է, որ անձնային աճի հիմնախնդրի շրջանակներում գրեթե ուսումնասիրված չէ սոցիալական կարծրատիպերի վրա անձնային աճի ազդեցությունը:

Նորովի է ատենախոսի մոտեցումը առաջադրված հիմնախնդրին առ այն, որ նա փորձել է պարզել սոցիալական կարծրատիպերի և անձնային աճի փոխկապակցվածությունն ու փոխպայմանավորվածությունը, փուլային պարբերականությամբ բացահայտել անձի սեռադերային, տարիքային և մասնագիտական կարծրատիպերի արտահայտվածության մակարդակը, հետազոտվողների անձնային աճի շարժընթացը, փորձարարական հետազոտության ենթարկել սոցիալական կարծրատիպերի և անձնային աճի փոխպայմանավորվածությունը, բացահայտել անձնային աճի ազդեցությունը սոցիալական կարծրատիպերի վրա, մշակել գործնական առաջարկներ:

Հետազոտական բազայի ձեռքբերման նպատակով ատենախոսը կիրառել է ախտորոշման հուսալի ու արժանահավատ մեթոդական գործիքներ (վերջիններիս կիրառմամբ ստացված տվյալների հավաստիությունը հիմնավորվում է նաև ընտրակազմի անհրաժեշտ քանակով և ներկայացուցչականությամբ, փորձարարական տվյալների քանակական և որակական վերլուծությունների համադրմամբ), այն է՝ «Անձի ինքնաակտուալիզացիայի ախտորոշում» մեթոդիկա (Ա. Վ. Լազուկին, ադապտացված Ն. Ֆ. Կալինայի կողմից), ինքնավերաբերմունքի ուսումնասիրության մեթոդիկա (Ս. Պ. Պանտիլեն), «Հանդուրժողականության ինդեքս» էքսպրես-հարցարան (Գ. Ու. Սոլդատովա, Օ. Ա. Կրավցովա և այլք), «Առնականություն-կանացիություն» մեթոդիկա (Սանդրա Բեմի, ձևափոխված Ի. Ս. Կլեցինայի կողմից), տարիքային կարծրատիպերի արտահայտվածության գնահատման հեղինակային հարցարան, մասնագիտական կարծրատիպերի արտահայտվածության գնահատման հեղինակային հարցարան, կարծրատիպերի արտահայտվածության որոշման հեղինակային հարցարան:

Սույն հետազոտության արդյունքները կիրառելի են անձնային աճի խթանմանն ուղղված հոգեբանական վարժանքների ընթացքում, հոգեբանական խորհրդատվության և հոգեշտկողական աշխատանքներում, հասարակական կարծիքի ձևավորմանն ուղղված աշխատանքներում և սոցիալական կյանքի տարբեր այլ ոլորտներում:

Իրականացված հետազոտությունների արդյունքները հիմք են տվել ատենախոսին հիմնավորել այն կարևորագույն կանխադրույթը, որ սոցիալական կարծրատիպերի

շարժընթացը պայմանավորված է անձնային աճով, ինչը հանդես է գալիս իբրև սոցիալական կարծրատիպերի շարժընթացը պայմանավորող ներքին հոգեբանական գործոն:

Ներկայացված ատենախոսությունը բնորոշվում է թե՛ տեսական, թե՛ գործնական նշանակությամբ այն առումով, որ առանցքային է գիտական այն ռեսուրսի վերհանումն ու կարևորումը, որ անձնային աճի խթանման արդյունքում դիտվում է կարծրատիպերի արտահայտվածության մակարդակի նվազում կամ դրանց լիովին կազմալուծում: Հետազոտության բազմագործոնային վերլուծությունը թույլ է տվել ատենախոսին հիմնավորել այն գաղափարական հենքը, որ անձնային աճի խթանման արդյունքում առավել ակնառու փոփոխությունների են ենթարկվում սեռադերային կարծրատիպերը:

Այնուամենայնիվ առկա են խնդրահարույց հարցեր՝ կապված ատենախոսական աշխատանքի առանձին դրույթների հետ, որոնց վերաբերյալ ատենախոսից առավել հանգամանալից մեկնաբանում ենք ակնկալում:

Դրանք են՝

1. Ներածության մեջ առկա է ընդհանուր հիշատակում, որ արդյունքների վերլուծության համար կիրառվել են մաթեմատիկական վիճակագրության մեթոդներ: Սակայն բացակայում է մեթոդների հստակ ձևակերպված ներկայացումը, ինչը ցանկալի էր: Բավարար կլիներ, եթե հիշատակվեր մեթոդի անվանումը կամ տեսակը, ինչը չէր խախտի ատենախոսության ընդհանուր ծավալը պահպանելու պահանջը, բայց միաժամանակ ցույց կտար ատենախոսի գիտական գրավոր խոսքի հասունությունը:

2. Պաշտպանության ներկայացված դրույթը՝ «Սոցիալական կարծրատիպերի կայունությունը հարաբերական է. արտաքին սոցիալական և ներքին հոգեբանական գործոնների ազդեցությամբ դրանք ենթարկվում են որոշակի փոփոխությունների», ձևակերպված է չափազանց ընդհանուր կերպով, ինչը չի ամրագրվում մեթոդական հետազոտության արդյունքներով, քանի որ մեկ ատենախոսության շրջանակներում հնարավոր չէ բացահայտել բոլոր արտաքին և ներքին հոգեբանական գործոնները, որոնք հանգեցնում են կարծրատիպերի փոփոխության:

3. Որպես գիտական նորույթ ներկայացվել է «անձնային աճ» եզրույթի մեկնաբանությունը, համաձայն որի անձնային աճը «անձնային հատկանիշների գիտակցման, ճանաչման և կատարելագործման գործընթաց» է, սակայն աշխատանքում բացակայում է անձնային

հատկանիշների գիտակցման և ճանաչման գործընթացների հստակ բնութագրումը՝ հստակ չէ, թե այդ երկու գործընթացները ինչպես է ատենախոսը տարբերակում միմյանցից, բացակայում է այդ գործընթացների ախտորոշումը:

Եզրակացություն

Այդուհանդերձ, վերոնշյալ թերությունները չեն ազդում Անի Սպարտակի Նազարյանի «Սոցիալական կարծրատիպերի և անձնային աճի համահարաբերակցությունը» վերտառությամբ ատենախոսության գիտականության վրա և չեն նսեմացնում ամբողջ աշխատանքի գիտական կշիռը: Կարևոր է նշել, որ աշխատանքի արդյունքներն ունեն ինչպես տեսական, այնպես էլ կիրառական մեծ նշանակություն: Անի Սպարտակի Նազարյանի «Սոցիալական կարծրատիպերի և անձնային աճի համահարաբերակցությունը» վերտառությամբ ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ինքնուրույն, գիտական բարձր մակարդակով գրված աշխատանք է: Աշխատանքը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին: Աշխատանքի հեղինակը՝ Անի Նազարյանը, արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ:

Ընդդիմախոս՝
Գայանե Հարությունյան
Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գ. Հարությունյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային
կենտրոնի գիտքարտուղար Մ. Սարգսյան